# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

## «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Երևան «24» «հունվարի» 2019թ.
ժամը 17 $^{00}$

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմի պատասխանատու **(ԳՊ/ԳԱՊ)** | Ս.Գրիգորյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** | Ա.Մուրադյան |
| Գնման Պատասխանատու/ Գնահատման աշխատակազմ **(ԳՊ/ԳԱ)** | Գ.Ասատրյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** | Ա.Առաքելյան |
| Գնման Պատասխանատու/ Բացման աշխատակազմ **(ԳՊ/ԲԱ)** | Մ.Քոչարյան |
| Գնման Պատասխանատու/ Մրցույթի համակարգող **(ԳՊ/ՄՀմ)** | Վ.Պետրոսյան |

### 1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների ամփոփման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

---

(Ս.Գրիգորյան)

1.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նիստը կայացել է 2019թվականի հունվարի 24-ին, ժամը 17$^{00}$-ին, «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲԸ վարչական շենքում, ք.Երևան, օդանավակայան «Զվարթնոց»-2 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

### 2. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ.

2.1. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2019 թվականի հունվարի 21-ին, ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել պետական եկամուտների կոմիտե՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: Պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն առ այն, որ ««Լաճ Գրուպ» ՍՊ և «Տիգման Գրուպ» ընկերությունների կողմից ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող:

### 3. «ԶԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին

---

(Ս.Գրիգորյան)

3.1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Հրավերի Հավելված N 6-ով նախատեսված գրությունը, առաջարկվող ապրանքների ամբողջ նկարագիրը՝ համաձայն հավելված N6.1-ի՝ էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել են «Զվարթնոց» ԱՕԿ ՓԲ ընկերության meteo@arminco.com էլեկտրոնային փոստի հասցեին: 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 4. Հանձնաժողովը որոշեց՝

---

(Ս.Գրիգորյան)

4.1. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 1-ին չափաբաժնով հաղթող ճանաչել «Լաճ Գրուպ» ՍՊԸ-ին:

4.2. Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ 2-րդ չափաբաժնով հաղթող ճանաչել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

4.3. Պայմանագրի կնքման նպատակով «ՀԱՕԿ-ԳՀԱՊՁԲ-18/17» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակիցներին՝ անգործության ժամկետի ավարտից հետո, ծանուցել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

4.4. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4.5. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սահմանել անգործության ժամկետ՝ պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարություն հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

## 5. Նիստին ներկա հանձնաժողովի անունները և ազգանունները:

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմի պատասխանատու (**ԳՊ/ԳԱՊ**) _____ Ս.Գրիգորյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Ա.Մուրադյան

Գնման Պատասխանատու/
Գնահատման աշխատակազմ (**ԳՊ/ԳԱ**) _____ Գ.Ասատրյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Ա.Առաքելյան

Գնման Պատասխանատու/
Բացման աշխատակազմ (**ԳՊ/ԲԱ**) _____ Մ.Քոչարյան

Գնման Պատասխանատու/
Մրցույթի համակարգող (**ԳՊ/ՄՀմ**) _____ Վ.Պետրոսյան